ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 49/2

24 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արթուր Հովսեփյանի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի 26.08.2015 թ-ի թիվ 138 որոշման դեմ:

Ա/Ձ Արթուր Հովսեփյանի բողոքում բերված փաստարկները.

Ա/Ձ Արթուր Հովսեփյանը նշում է, որ իր կողմից թույլ է տրվել ՀԴՄ շահագործման կանոնների խախտում, ինչի արդյունքում 06.11.2015 թ–ին կազմվել է թիվ 6104966 ակտը և իրեն առաջադրվել է երկամսյա ժամկետում վճարել տուգանք՝ 300.000 դրամի չափով:

Մինչ այդ բողոքաբերին չի հանձնվել որևէ գրավոր փաստաթուղթ, որով տեղեկացված կլիներ իր կողմից թույլ տրված իրավախախտման մասին, այն է՝ իրավախախտման փաստը, որը ֆիքսվել է առանց իր մասնակցության և տեղեկացվածության, չի կարող արձանագրված համարվել «ՀՀ–ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի կարգավորումներից ելնելով, այն պարզ պատճառով, որ հսկիչ-գնման արդյունքում կազմված արձանագրությունը իրեն չի տրամադրվել, իսկ իրավախախտման փաստը հաստատող օրենքով նախատեսված փաստաթուղթը ստուգման ակտը, դեռ կազմված և հանձնված չի եղել, որից արդեն պարզ կլիներ թույլ տրված իրավախախտման բնույթը և դրանից բխող հետևանքները:

Վերոնշյալ ակտը Ա/Ձ Արթուր Հովսեփյանը ստացել է 12.11.2014 թ–ին, և ըստ այդմ հենց այդ օրն էլ կարելի է թույլ տրված իրավախախտման փաստը հաստատված-արձանագրված համարել:

Ավելին, ՀՀ ՖՆ Էրեբունու հ/տ կողմից թույլ է տրվել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 38-րդ հոդվածների խախտում, այն է՝ օրենքով սահմանված կարգով ընթացք չի տրվել Ա/Ձ Արթուր Հովսեփյանի դիմումին, օրենքի ուժով հարուցված վարչական վարույթի պայմաններում չի իրականացվել օրենքով սահմանված լսումներ, ինչի արդյունքում համապատասխան հիմնավորումներով կբավարարեր դիմումում արծարծված ակտ կայացնելու իր խնդրանքը կամ հիմնավորված կերպով կմերժեր այն:

Դրա փոխարեն հարկային տեսչությունը դիմումին պատասխանել է 31.07.2015 թ–ին կազմված գրությամբ: Մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետներում վարչական մարմինը չի ընդունում վարչական ակտ, ապա վարչական ակտը համարվում է ընդունված:

Տվյալ պարագայում ՀՀ ՖՆ Էրեբունու հ/տ-ի կողմից չկայացրած որոշումը՝ կապված թիվ 3104966 ակտով առաջադրված 300.000 դրամ գումարի կրկնապատկման վերացման հետ, օրենքի ուժով համարվում է կայացված, այն է՝ 300.000 դրամի չափով կրկնապատկումը վերացված:

Բացի դրանից, ՀՀ ՖՆ Էրեբունու հ/տ-ն 26.08.2015 թ–ին, առանց ծանուցելու և համապատասխան լսումներ իրականացնելու, կայացրել է մեկ այլ վարչական ակտ՝ «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» որոշում (Որոշում թիվ 138):

Վերոնշյալ վարչական ակտը հանդիսանում է ոչ իրավաչափ և ենթակա է անվավեր ճանաչման, քանզի այն կայացվել է մի շարք իրավական ակտերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, վարչական ակտ կայացնելիս հարկային տեսչության կողմից բողոքաբերը չի ծանուցվել, որպեսզի հնարավորություն ունենար արտահայտելու իր դիրքորոշումը, ընտրեր ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ պետական մարմինների առջև արդյունավետ պաշտպանության իր իրավունքը: Մինչդեռ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է. «Վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է»:

Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի ուժով իմ կողմից խնդրարկվող գործողության ՀՀ ՖՆ Էրեբունու հ/տ-ի կողմից չկայացրած որոշումը՝ կապված թիվ 3104966 ակտով առաջադրված 300.000 դրամ գումարի կրկնապատկման վերացման հետ, օրենքի ուժով համարվում է կայացված, իսկ՝ 300.000 դրամի չափով կրկնապատկումը վերացված, բողոքաբերը գտնում է, որ տվյալ դեպքում առկա են հիմքերը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 26.08.2015 թ–ին կայացված թիվ 138 որոշումը անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով, բողոքաբերը խնդրում է խնդրարկվող որոշումը, կապված թիվ 3104966 ակտով առաջադրված 300.000 դրամ գումարի կրկնապատկման վերացման հետ, համարել ընդունված, ինչպես նաև ղեկավարվերվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի, 75-77-րդ հոդվածների դրույթներով՝ անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 26.08.2015 թ-ին կայացված թիվ 138 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 17.10.2014 թ–ի թիվ 6104966 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արթուր Հովսեփյանի մոտ իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 06.11.2014 թ–ի թիվ 6104966 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով

կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ակտով առաջադրված տուգանքը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված երկու ամսվա ընթացքում Ա/Ձ Արթուր Հովսեփյանի կողմից չվճարելու հետևանքով այն կրկնապատկվել է: Այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն օրենքով սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական գործարքներ իրականացնելու պահին և վայրում հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է՝

...

բ) երեք հարյուր հազար դրամի չափով՝ գործունեության այլ տեսակների մասով»:

Նույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն. «Սույն հոդվածով սահմանված տուգանքը, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից *խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում, կրկնապատկվում է*»:

Քննարկվող դեպքում խախտման փաստն արձանագրվել է և դրա համար նախատեսված տուգանքը առաջադրվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 06.11.2014 թ-ի թիվ 6104966 ակտով, սակայն Ա/Ձ Արթուր Հովսեփյանի կողմից նշված տուգանքը վճարվել է միայն 13.01.2015 թ-ին: Այսինքն, Ակտով առաջադրված տուգանքը Ա/Ձ Արթուր Հովսեփյանի կողմից վճարվել է վերոգրյալ իրավանորմով սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ, որի հետևանքով այն օրենքի ուժով կրկնապատկվել է:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի կողմից 26.08.2015 թ-ին կայացվել է թիվ 138 որոշումը Ա/Ձ Արթուր Հովսեփյանից Ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված մասը՝ գումարով 300.000 դրամ, գանձելու մասին:

Ինչ վերաբերվում է Ա/Ձ Արթուր Հովսեփյանի կողմից 23.07.2015 թ-ին ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ հասցեագրված դիմումին, ապա հարկ է նշել, որ նշված դիմումին ընդամենը 8 օր հետո պատասխանվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 31.07.2015 թ-ի գրությամբ: Հետևապես, որևէ խոսք գնալ չի կարող ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները խախտված լինելու մասին:

Բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի 26.08.2015 թ-ի թիվ 138 որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, այն է՝ վարչական ակտ կայացնելիս բողոքաբերին սահմանված կարգով չի ծանուցվել վարչական վարույթին մասնակցելու և դրա վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու համար, հարկ է նշել հետևյալը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը

նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Նույն օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս *վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է*:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված պարտավորությունների գումարները գանձելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին Ա/Ձ Արթուր Հովսեփյանին ծանուցելու պարտականություն չի առաջացել, քանի որ ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի 26.08.2015 թ-ի թիվ 138 որոշումն ընդունվել է հարկային մարմնում առկա ապացույցների հիման վրա, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք օրը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի 26.08.2015 թ-ի թիվ 138 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**